ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը հրավիրում է ուսանողական գիտաժողովի, որը տեղի կունենա 2025 թվականի ապրիլի 4-ին, սկիզբը՝ ժամը 11:00-ին, հեռավար՝ առցանց ձևաչափով:

Գիտաժողովին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և ԳՊՀ գործընկեր՝ արտերկրի բարձրագույն ուսումնական (գիտահետազոտական) հաստատությունների ուսանողները:

Գիտաժողովն անցկացվելու է բնական և հասարակական գիտությունների մասնագիտական բաժանմունքներում:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2025 թվականի մարտի 25-ը լրացնել մասնակցության էլեկտրոնային հայտը՝ հետևյալ հղումով.

https://publications.gsu.am/confernece/

Հայտին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև զեկուցման ամփոփագիրը (հայերեն, ռուսերեն և անգլերեն): Զեկուցման ամբողջական տարբերակը, ինչպես նաև համապատասխան ամբիոնի երաշխավորությունը կամ գիտական ղեկավարի կարծիքն անհրաժեշտ է ուղարկել ԳՊՀ ՈՒԳԸ էլեկտրոնային փոստի հասցեով՝ sssgsu@mail.ru, **մինչև 2025թ. մարտի 25-ը՝ ներառյալ**, նշելով հեղինակ(ներ)ի անուն, ազգանունը, բարձրագույն ուսումնական (գիտահետազոտական) հաստատության ամբողջական անվանումը: Գրախոսության փուլը հաղթահարելու պարագայում զեկուցումները հրապարակվելու են ԳՊՀ ՈՒԳԸ հոդվածների ժողովածուի հերթական համարում՝ էլեկտրոնային տարբերակով:

Խնդրում ենք պահպանել զեկուցումներին ներկայացվող հետևյալ տեխնիկական պահանջները՝

1. Զեկուցումը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, համակարգչային շարվածքով՝ B5 չափի տպագրական թղթի

վրա, ‹‹**GHEA Grapalat**›› տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:
2. Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, **թավ՝ Bold**), կողմնորոշումը՝ կենտրոն:
3. Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում (10,5 տառաչափով), նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը **(թավ),** բարձրագույն ուսումնական (գիտահետազոտական) հաստատության անվանումը, ֆակուլտետը, բաժինը, կուրսը, գիտական ղեկավարի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը:
4. Մեկ տող ներքև՝ 10,5 pt տառաչափով, տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:
5. Մեկ տող բաց թողնելով՝ 10 pt տառաչափով, հոդվածի լեզվով, շեղատառ (italic) և **թավ** ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է ներկայացվեն ուսումնասիրության առարկան, նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակ(ներ)ի հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:
6. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր**.» և նշել 5-6 բանալի բառեր:
7. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել զեկուցումը, նշելով համապատասխան հղումները: Մեջբերումներն անհրաժեշտ է կատարել համակարգչային հղման ձևով՝ զեկուցման համար հերթական համարակալմամբ (1-ից մինչև վերջին հղումը):
Զեկուցման վերջում ներկայացվում է **օգտագործված գրականության ցանկը**:
8. Լատիներեն և հայերեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով:
9. Աղյուսակները և գծագրերը (համարակալված և վերնագրված) անհրաժեշտ է ներկայացնել նկարի տեսքով՝ 10 տառաչափով:
10. Օգտագործված գրականության ցանկից հետո զեկուցման բնագիր լեզվից տարբեր երկու լեզուներով շարադրել զեկուցման վերնագիրը (մեծատառերով, **թավ,** կողմնորոշումը՝ կենտրոն), մեկ տող ներքև՝ հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը **(թավ)**, բարձրագույն ուսումնական (գիտահետազոտական) հաստատությունը, ֆակուլտետը, բաժինը, կուրսը, գիտական ղեկավարի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը: Մեկ տող բաց թողնելուց հետո շարադրել ամփոփագիրը, բանալի բառերը:
11. Զեկուցման հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել բարձրագույն ուսումնական (գիտահետազոտական) հաստատության համապատասխան ամբիոնի երաշխավորությունը կամ գիտական ղեկավարի կարծիքը:
12. Զեկուցումները, երաշխավորություններն ու կարծիքներն ընդունվում են ԳՊՀ ՈՒԳԸ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով՝ **sssgsu@mail.ru**

Գիտաժողովին միանալու հղումն է՝

https://zoom.us/j/3897702958?pwd=WS9UbIF1MjJqSSsrVFlNQjdaUG5CQT09#success
Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել ԳՊՀ ՈՒԳԸ նախագահ Մերի Փուրթոյանին /հեռախոսահամարներ՝ 099-533-303, +374-060-46-12-99, 060-46-03-02/ կամ գրել ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության էլեկտրոնային փոստին /հասցե՝ **sssgsu@mail.ru**/:

Շնորհակալություն համագործակցության համար:
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերություն